ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/19

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Բողոք բերող՝ «ZHONGTONG BUS HOLDING CO» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով բաց մրցույթ, ավտոբուսների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «ZHONGTONG BUS HOLDING CO» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 16.03.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին կատարելու պայմանագրում օրենսդրությանը համապատասխան փոփոխությունները և թույլ տալ պայմանագիրը կնքել ԱՄՆ դոլարով:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 16.03.2021թ.-ին:

16.03.2021թ.-ին է www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-Լ0-2021/19 համարի ծածկագիրը:

24.03.2021թ.-ին, 01.04.2021թ.-ին, 09.04.2021թ.-ին և 15.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.04.2021թ.-ին:

2. «ZHONGTONG BUS HOLDING CO» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ZHONGTONG BUS HOLDING CO» ՍՊԸ-ն 16.03.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար 2020 թվականի դեկտեմբերի 17-ին ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6 ծածկագրով ավտոբուսների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ): Մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել նաև մեր կազմակերպությունը՝ ZHONGTONG BUS HOLDING CO..LTD-ն (այսուհետ՝ Կազմակերպություն): Մրցույթի բացման ժամկետ է սահմանված եղել 27.01.2021 թ ժամը 11:00: «Գնումների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված ժամկետում մեր Կազմակերպության կողմից պարզաբանման հարցում է ուղարկվել, թե արդյոք կարող ենք դոլարով կամ եվրոյով գնային առաջարկ ներկայացնել, ինչին ստացել ենք պատասխան, որ «Ներկայացված հարցադրման կարգավորումը սահմանված է հրավերի ՄԱՍ 1-ի 8.5 կետում» (կից պարզաբանման հարցման և պատասխանի արտատպումը): Հրավերի ՄԱՍ 1-ի 8.5 կետում մասնավորապես նշված է «Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ տվյալ օրվա ՀՀ Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով»: 29.01.21թ. հրապարակվել է

արձանագրություն, որում նշված է, որ գնային առաջարկը համեմատվել է ՀՀ դրամով՝ փվյալ օրվա (հայտը ներբեռնվել է www.armeps.am համակարգ 26.01.2021թ. ՀՀ կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով: Այդ օրը դոլարի փոխարժեքը ՀՀ Կենտրոնական Բանկում սահմանված է եղել 518.26 դրամ (արտատպումը կցվում է): Այժմ դոլարի փոխարժեքը կազմում է 527.05 դրամ (արտատպումը կցվում է):

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման, աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների վճարումների, գույքի գնահատման և աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դրամական (փողային) գնանշումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով, բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի:

«Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կենտրոնական բանկը սահմանում է արտարժութային գործառնությունների իրականացման, արտարժույթի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքի որոշման, արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորման կարգը:

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 21-ի «Արտարժույթի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքի որոշման կարգը սահմանելու մասին» թիվ 690-Ն որոշմամբ սահմանված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքի որոշման կարգի 3-րդ կետի համաձայն՝ արտարժութային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի փվյալ օրվա միջին փոխարժեքը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից:

ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի կողմից 2005 թվականի հոկտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետությունում արժութային արժեքներով գործարքների իրականացման վերաբերյալ տրված թիվ 3 պաշտոնական պարզաբանման 3-րդ կետի համաձայն՝ ՀՀ տարածքում ՀՀ դրամով իրականացվում են ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման փողային գնանշումները, մասնավորապես՝

- ապրանքների (գույքի) վաճառքի, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման գովազդներում փողային գնանշումները,

- ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից հրապարակային առաջարկները (հրապարակային պայմանագրերում փողային գնանշումները),

- գույքի անհատույց փրամադրման կամ անհատույց օգտագործման դեպքերում պայմանագրերում և հանձնման-ընդունման փաստաթղթերում այդ գույքի գնանշումը (արժեքավորումը),

- պասիվ եկամուտների (շահաբաժիններ, ռոյալթիներ, գործառնական կամ ֆինանսական վարձակալություն) գնանշումները (արժեքավորումը) և վճարումները:

Պայմանագրով նախատեսված գույքային սանկցիաների (տույժեր, տուգանքներ) և փոխհատուցումների (բացառությամբ՝ ծախսերի փոխհատուցման դեպքերի, որոնց վրա տարածվում են Օրենքի պահանջները) գնանշման (արժեքավորման) և դրանց վճարման նկատմամբ Օրենքով սահմանված սահմանափակումները չեն տարածվում:

Նույն պաշտոնական պարզաբանման 4-րդ կետի համաձայն՝ այն գործարքները, որոնց գնանշումը Օրենքի համաձայն պետք է կատարվի ՀՀ դրամով՝ պայմանագրերում և սկզբնական (հաշվառման) փաստաթղթերում կարող է նշվել միայն արտարժույթի փոխարժեքը (այլ ոչ թե գների զուգահեռաբար արտահայտումը նաև արտարժույթով):

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն անկանխիկ վճարումներ նախատեսող և գրավոր ձևով կնքված պայմանագրերում գնանշումները կարող են կատարվել արտարժույթով, եթե այդ պայմանագրերը կնքվել են իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ռեզիդենտի և իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ոչ ռեզիդենտի միջև:

Հաշվի առնելով նշվածը գտնում ենք, որ եթե մեր կազմակերպությունը ՀՀ օրենսդրության իմաստով համարվում է ոչ ռեզիդենտ, ուստի վերջինի հետ գրավոր ձևով կնքվող պայմանագրով գնանշումը կարող է կատարվել արտարժույթով:

Այս կապակցությամբ առաջարկում ենք ստանալ նաև ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի դիրքորոշումները:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «ZHONGTONG BUS HOLDING CO» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին կատարելու պայմանագրում օրենսդրությանը համապատասխան փոփոխությունները և թույլ տալ պայմանագիրը կնքել ԱՄՆ դոլարով:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.03.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/3822-2021 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «ZHONGTONG BUS HOLDING CO» ՍՊԸ-ի կողմից 16.03.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

18.03.2021թ.-ի թիվ 02/61-5957 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարությամբ գտնվող ԳԲՔԱ-ԼՕ-2021/19 գործով ZHONGTONG BUS HOLDER CO LTD 16.03.2021 թվականին ներկայացրած բողոքի վերաբերյալ տեղեկացնում եմ հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի շրջանակում գնման հայտ է ներկայացրել ZHONGTONG BUS HOLDING CO LTD ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

Ընկերության կողմից գնային առաջարկը ներկայացվել է ԱՄՆ դոլարով՝ 14409500 (տասնչորս միլիոն չորս հարյուր ինը հազար հինգ հարյուր):

Գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8.5 կետի համաձայն՝ «Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով տվյալ օրվա ՀՀ Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով»:

Ընկերության գնային առաջարկը համեմատվել է Հայաստանի Հանրապետության դրամով՝ տվյալ օրվա (հայտը ներբեռնվել է www.armeps.am համակարգ 26.01.2021թ.) ՀՀ Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով՝ 518.26 ԱՄՆ դոլարով:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, գնման ընթացակարգը կասեցրել և ընտրված և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին որոշելու նպատակով բավարար գնահատված մասնակիցների հետ վարել է գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ, որին մասնակցել է միայն Ընկերության կողմից լիազորված ներկայացուցիչը:

Վերը նշված բանակցությունների արդյունքում Ընկերությունը նվազեցրել է գնային առաջարկը և հանձայնել է պայմանագիրը կնքել 7199920000 (յոթ միլիարդ հարյուր իննսունինը միլիոն ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամով:

Վերոգրյալով պայմանավորված՝ սույն թվականի փետրվարի 22-ին Ընկերությանը օրենքով սահմանված կարգով տրամադրվել է ծանուցում՝ պայմանագիրը կնքելու և օրենսդրությամբ նախատեսված պայմանագրի, որակավորման և կանխավճարի ապահովումները ներակայցնելու, որի վերջնաժամկետն է սահմանվել 16.03.2021 թվականը:

«Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը»:

Նշված իրավանորմի հիշատակումը պայնավորված է այն հանգամանքով, որ պայմանագրի կնքման ծանուցումից հետո Ընկերության առաջարկի հիման վրա պայմանագրի նախագծում կատարվել են համապատասխան կարգավորումներ, սակայն դրանք չեն վերաբերվել պայմանագիրը արտարժույթով կնքելու հանգամանքին, այսինքն՝ Ընկերության կողմից պայմանագիրը արտարժույթով կնքելու առաջարկ և/կամ պայման չի ներկայացվել՝ ուստի բողոքով ներկայացված պահանջը անհասկանալի է:

Ընկերության կողմից բողոքով ներկայացված իրավանորմերի համաձայն, պայմանագրերը կարող են ոչ ռեզիդենտների հետ կնքվել արտարժույթով, սակայն նշված իրավանորմերով օրենսդիրը սահմանում է կնքման իրավունք, այլ ոչ թե պարտադիր (իմպերատիվ) պահանջ, սակայն նշված իրավանորմերը որևէ կերպ չեն կարգավորում գնումների պլանավորման և ՀՀ դրամով հրապարակելու հանգամանքը:

Միաժամանակ՝ պայմանագիր կնքելու նպատակով պատվիրատուի կողմից հայտարարված գնման ընթացակարգի հրավերով ի սկզբանե չի նախատեսվել պայմանագիրը արտարժույթով կնքելու պայման:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ «Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում:

Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.»:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ «Եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում»:

Գտնում ենք, որ Ընկերության կողմից հաստատված պայմանագիրը և բանկային երաշխիքները ներկայացնելու վերջին օրը բողոք բերելու հանգամանքը ունի վերը նշված իրավանորմի պահանջի կատարումից խուսափելու նպատակ:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ Ընկերության պահանջը, պայմանագիրը արտարժույթով կնքելու վերաբերյալ ի սկզբանե անհիմն է և ենթակա է մերժման:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/19 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի կողմից ավտոբուսների ձեռքբերման նպատակով 17.12.2020թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, 26.01.2021թ.-ին հայտ է ներկայացրել «ZHONGTONG BUS HOLDING CO» ՍՊԸ-ն:

iv. Ընկերությունը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով

սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

v. Ընկերության կողմից գնային առաջարկը ներկայացվել է ԱՄՆ դոլարով՝ 14 409 500 (տասնչորս միլիոն չորս հարյուր ինը հազար հինգ հարյուր):

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.01.2021թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ Ընկերության գնային առաջարկը համեմատվել է Հայաստանի Հանրապետության դրամով՝ տվյալ օրվա (հայտը ներբեռնվել է www.armeps.am համակարգ 26.01.2021թ.-ին) ՀՀ Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով՝ 1 ԱՄՆ դոլարի դիմաց 518.26 ՀՀ դրամով:

vii. Հանձնաժողովի 03.02.2021թ.-ի նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որոշել է գնման ընթացակարգը կասեցնել և մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների՝ 08.02.2021թ.-ին, ժամը 11:00-ին:

viii. Հանձնաժողովի 08.02.2021թ.-ի նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգի գների նվազեցման շուրջ հրավիրված միաժամանակյա բանակցություններին օրենքով սահմանված կարգով ներկայացել է «ZHONGTONG BUS HOLDING CO» ՍՊԸ-ն: «Ռեգնում» ՍՊ ընկերությունը պատշաճ ծանուցվել է սակայն չի ներկայացել:

ix. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ռեգնում» ՍՊ ընկերություն գնային առաջարկը գերազանցում է պատվիրատուի կողմից սահմանված նախահաշվային արժեքը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, որոշել է նշված մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել: Որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ ընտրված մասնակից ճանաչել «ZHONGTONG BUS HOLDING CO» ՍՊԸ-ին: Գնահատող հաձնաժողովը որոշել է հայտարարել անգործություն՝ 10-օր, հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Բանակցությունների արդյունքները ամփոփված են սույն արձանագրությանը կից 1 (մեկ) հավելվածում, համաձայն որի՝ Ընկերությունը նվազեցրել է գնային առաջարկը և

համաձայնել է պայմանագիրը կնքել 7 199 920 000 (յոթ միլիարդ հարյուր իննսունինը միլիոն ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամով:

x. 09.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

xi. Հայտարարությամբ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «ZHONGTONG BUS HOLDING CO» ՍՊԸ-ի կողմից 16.03.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ՝ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում դրա փոխարժեքը:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275 փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և

կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Երևանի քաղաքապետարանի կողմից ավտոբուսների ձեռքբերման նպատակով 17.12.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով բաց մրցույթ հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1 և 5.2 կետերի համաձայն՝ առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով: Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Հրավերի 8.5 կետի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ տվյալ օրվա ՀՀ Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով:

Վերոնշյալ նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայմաններ, համաձայն որոնց՝ գնային առաջարկը պետք է բաղկացած լինի արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված

արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից և միևնույն ժամանակ՝ ներկայացված գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ տեղեկատվություն է պարունակում նաև հրավերը: Ընդ որում, եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ տվյալ օրվա ՀՀ Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կնքվում են բանավոր կամ գրավոր (հասարակ կամ նոտարական) ձևով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից: Երկկողմ (բազմակողմ) գործարքները կարող են կնքվել նույն օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված եղանակներով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքով, այլ իրավական ակտերով և կողմերի համաձայնությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ, որոնց պետք է համապատասխանի գործարքի ձևը (որոշակի ձևաթղթի վրա կնքելը, կնիքով դրոշմված լինելը և այլն), և կարող են նախատեսվել այդ պահանջները չպահպանելու հետևանքներ (...): Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով

ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքում կամ կողմերի համաձայնությունում ուղղակի նշված դեպքերում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ: Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան (պայմանագիր կնքելու առաջարկը) ուղարկելու և մյուս կողմի դրա ակցեպտի (առաջարկը ընդունելու) միջոցով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը կարող է կնքվել գործարքները կնքելու համար նախատեսված ցանկացած ձևով, եթե տվյալ տեսակի պայմանագիր կնքելու համար օրենքով որոշակի ձև սահմանված չէ: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ պայմանագիրը՝ որպես գործարք, կարող է կնքվել բանավոր կամ գրավոր ձևով: Պայմանագրի ձևի վերաբերյալ օրենսդրական կարգավորման նպատակը պայմանագրի հիման վրա ծագող հարաբերություններն ավելի հստակ դարձնելն է, քաղաքացիական

շրջանառության կայունությունն ապահովելը, պայմանավորված պայմանագրի տվյալ տեսակի բնույթով՝ ապագայում հնարավոր վեճերի կանխումը: Մասնավորապես՝ պայմանագրի կնքման բանավոր ձև նախատեսելու միջոցով քաղաքացիական շրջանառությունը չի ծանրաբեռնվում (օրինակ՝ կնքման պահին կատարվող գործարքները, որոնց համար հատուկ կարգավորում նախատեսված չէ, կարող են կնքվել բանավոր ձևով): Ինչ վերաբերում է գրավոր ձևով կնքվող գործարքներին, ապա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործարքների որոշ տեսակների համար հստակ նախատեսելով գրավոր ձև՝ օրենսդիրը կարևորել է այդ պայմանագրերը կնքված համարվելու համար որոշակի պահանջների պահպանումը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետ, 450-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետեր): Սահմանելով գործարքի կնքման գրավոր ձև՝ օրենսդիրը նախատեսել է այդ ձևը չպահպանելու երկու հնարավոր հետևանք.

1) գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից՝ չզրկելով գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից,

2) օրենքում կամ կողմերի համաձայնությունում ուղղակի նշված դեպքերում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության:

Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ օրենսդրի կողմից պայմանագրի տվյալ ձևի համար սահմանված է գրավոր ձև՝ առանց ձևը չպահպանելու հետևանքները նշելու (օրինակ՝ կապալի պայմանագիր, հանձնարարության պայմանագիր, կոմիսիայի պայմանագիր և այլն), ապա գործում է վերը նշված 1-ին կանոնը: Վերը նշված իրավական հետևանքը կիրառվում է բացառապես վեճի առկայության դեպքում: Այսինքն՝ այն դեպքերում, երբ տվյալ գործարքը կնքված լինելու փաստը կողմերի կողմից չի վիճարկվում, ապա գործարքի հասարակ գրավոր ձևը պահպանված չլինելու հանգամանքն ինքնին որևէ իրավական հետևանքներ չի առաջացնում: Հետևաբար նշված հետևանքը դատավարական բնույթի է: Այն դեպքերում, երբ օրենքով կամ պայմանագրով հստակ նախատեսված է, ապա պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է անվավերության *(տե՛ս, Զարուհի Հայրապետյանը և Գայանե Ղազարյանն ընդդեմ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/0556/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային

նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: ՀՀ վճռաբեկ դատարանը, բացահայտելով նշված հասկացությունների բովանդակությունը, արձանագրել է, որ «կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը, իսկ «կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այսինքն՝ գործարքն այն կնքած անձանց ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցությունն է *(տե՛ս, Նելլի Հակոբյանը և մյուսներն ընդդեմ «Համխաչ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը)*:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ ինչպես ցանկացած պայմանագիր, ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) պայմանագիրը ևս կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Այսինքն՝ ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) իրավահարաբերության առաջացման համար անհրաժեշտ է, որ պայմանագրի կողմերը հստակորեն դրսևորեն իրենց կամահայտնությունն պայմանագիր կնքելու վերաբերյալ, և այդ կամքն ուղղված լինի կատարող-վաճառողի դեպքում՝ իր արտադրած, գնած ապրանքները կամ աշխատանքի և/կամ ծառայության արդյունքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) գնորդին հանձնելուն, իսկ գնորդի դեպքում՝ այդ ապրանքներն (աշխատանքը, ծառայությունը) ընդունելուն և դրանց համար որոշակի գումար վճարելուն: Նման կամքի դրսևորումը և դրա իրականացմանն ուղղված անհրաժեշտ գործողությունների իրականացումը, սակայն, դեռևս բավարար չէ ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) իրավահարաբերության առկայության փաստն արձանագրելու համար: Միաժամանակ անհրաժեշտ է, որ կողմերի կամահայտնությունն ամրապնդված և ձևակերպված լինի ՀՀ օրենսդրությամբ գործարքի տվյալ տեսակի համար սահմանված կարգով, իսկ պայմանագիրն էլ համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից ավտոբուսների ձեռքբերման նպատակով 17.12.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով բաց մրցույթը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան, որին մասնակցելու նպատակով, հայտ ներկայացրած «ZHONGTONG BUS HOLDING CO» ՍՊԸ-ի գնային

առաջարկը ներկայացվել է ԱՄՆ դոլարով՝ 14409500 (տասնչորս միլիոն չորս հարյուր ինը հազար հինգ հարյուր), որը համեմատվել է Հայաստանի Հանրապետության դրամով՝ տվյալ օրվա (հայտը ներբեռնվել է www.armeps.am համակարգ 26.01.2021թ.-ին) ՀՀ Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով՝ 1 ԱՄՆ դոլարի դիմաց 518.26 ՀՀ դրամով:

08.02.2021թ.-ին ժամը 11:00-ին տեղի ունեցած միաժամանակյա բանակցություններին արդյունքում Ընկերությունը ճանաչվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված և հաղթող մասնակից՝ առաջարկելով պայմանագիրը կատարել 7 199 920 000 (յոթ միլիարդ հարյուր իննսունինը միլիոն ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Երևանի քաղաքապետարանի կողմից ավտոբուսների ձեռքբերման նպատակով 17.12.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով բաց մրցույթին, մասնակցելու նպատակով, հայտ ներկայացրած «ZHONGTONG BUS HOLDING CO» ՍՊԸ-ն, թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարելով և հավաստելով, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ, գնային առաջարկը ներկայացնելով ԱՄՆ դոլարով՝ 14 409 500 (տասնչորս միլիոն չորս հարյուր ինը հազար հինգ հարյուր), տեղեկացված է եղել իր կողմից ներկայացված արտարժույթի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով՝ 1 ԱՄՆ դոլարի դիմաց 518.26 ՀՀ դրամով, համեմատվելու հանգամանքի մասին: Ավելին, Ընկերությունը այդ հանգամանքի մասին տեղեկացել է նաև Հանձնաժողովի 27.01.2021թ.-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ, որը հրապարակվել է www.gnumner.am պաշտոնական կայքում՝ 29.01.2021թ.-ին: Ինչպես նաև Ընկերությունը (ներկայացուցիչը), ներկայանալով 08.02.2021թ.-ին հրավիրված միաժամանակյա բանակցություններին, նվազեցրել է գնային առաջարկը և համաձայնել է պայմանագիրը կնքել 7 199 920 000 (յոթ միլիարդ հարյուր իննսունինը միլիոն ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամով:

Ամբողջացնելով վերոգրյալները, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ թե Պատվիրատուի և թե Ընկերության նշված գործողություններն ուղղված են եղել

որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն՝ որոշակի պայմաններով պայմանագիր կնքելուն: Կողմերը հստակորեն դրսևորել են իրենց կամահայտնությունը պայմանագիրը ՀՀ դրամով կնքելու վերաբերյալ:

Ուստի, վերոնշյալներով պայմանավորված, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Բողոքաբերի կողմից բողոքով ներկայացված իրավական հիմքերը, սույն դեպքում, կիրառելի չեն: Հատկապես այն պարագայում, երբ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ մասի 7-րդ կետով սահմանվել է, որ անկանխիկ վճարումներ նախատեսող և գրավոր ձևով կնքված պայմանագրերում գնանշումները կարող են կատարվել արտարժույթով, եթե այդ պայմանագրերը կնքվել են իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ռեզիդենտի և իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ոչ ռեզիդենտի միջև:

Այլ կերպ ասած՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ մասի 7-րդ կետով սահմանված՝ պայմանագրում գնանշումները արտարժույթով կատարվելու վերաբերյալ դրույթը հայեցողական է, այն պարտադիր կանոն՝ նորմ, չի պարունակում, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի իմաստով պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին), և ոչ թե հայեցողական կանոններին (դիսպոզիտիվ նորմերին):

Անդրադառնալով Պատվիրատուի ներկայացուցչի կողմից բողոքի քննության նիստում ներկայացված ՀՀ ֆինանսների նախարարության ի պատասխան Երևանի քաղաքապետարանի 22.03.2021թ.-ի թիվ 02/61-6169 գրության, 24.03.2021թ.-ին տրված թիվ 01/26-1/4220-2021 գրությանը, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ցանկացած բողոքի քննություն, գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հարուցում և իրականացնում է այն ներկայացրած անձի բողոքի վեճի առարկայի, պահանջի, փաստացի և իրավական հիմքերի, ապացույցների շրջանակներում՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածը: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Ուստի, ելնելով վերոգրյալից, բողոքի քննության ընթացքում ներգրավված կողմերը (պատվիրատու, երրորդ կողմ/անձ) պետք է ներկայացնեն միայն այնպիսի փաստեր ու հանգամանքներ, որոնք վերաբերելի են քննարկման ենթակա դարձված բողոքի վեճի առարկային, պահանջին, փաստացի և իրավական հիմքերին, ապացույցներին:

Ելնելով վերոշարադրյալ իրավական հիմքերից և դրանց վերաբերյալ արված դատողություններից, ուսումնասիրելով ներկայացված գրագրությունը՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն հետևության, որ գրություններով ներկայացված փաստերն ու հանգամանքները չեն վերաբերում սույն բողոքի վեճի առարկային, պահանջին, փաստացի և իրավական հիմքերին, ապացույցներին:

Մասնավորապես՝ Ընկերության կողմից ներկայացված բողոքի պահանջն է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին պայմանագրում օրենսդրությանը համապատասխան փոփոխություններ կատարելուն պարտավորեցնելը և պայմանագիրը ԱՄՆ դոլարով կնքելուն թույլ տալը: Բողոքի վեճի առարկան՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում կնքման ենթակա պայմանագիրն է, մասնավորապես՝ փոխարժեքը: Իրավական հիմքերը՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին», «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 21-ի «Արտարժույթի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքի որոշման կարգը սահմանելու մասին» թիվ 690-Ն որոշմամբ սահմանված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքի որոշման կարգով սահմանված իրավական դրույթներն են ու ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի կողմից 2005 թվականի հոկտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետությունում արժութային արժեքներով գործարքների իրականացման վերաբերյալ տրված թիվ 3 պաշտոնական պարզաբանումը: Իսկ Պատվիրատուի ներկայացուցչի կողմից բողոքի քննության նիստում ներկայացված Երևանի քաղաքապետարանի 22.03.2021թ.-ի թիվ 02/61-6169 գրությամբ բարձրացված հարցադրումները վերաբերում են բանկային երաշխիքների ներկայացման ժամկետներին:

Ինչ վերաբերում է ՀՀ ֆինանսների նախարարության 24.03.2021թ.-ի թիվ 01/26-1/4220-2021 գրությամբ նշված բողոք ներկայացնելու ժամկետներին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ այն նույնպես սույն դեպքում վերաբերելի չէ, քանի որ, ինչպես վերը նշվեց, Ընկերությունը ներկայացված բողոքով ոչ թէ վիճարկման առարկա է դարձրել պայմանագիր կնքելու որոշումը, այլ այդ պայմանագրի՝ իր կողմից արտարժույթով

ներկայացված գնային առաջարկի փոխարժեքով՝ ՀՀ դրամով կնքելու հանգամանքը, իսկ բողոքն էլ ընդունվել է վարույթ՝ հիմք ընդունելով Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին ենթակետը, այն է՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ZHONGTONG BUS HOLDING CO» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքներն անհիմն են, որպիսի պայմաններում ներկայացված բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«ZHONGTONG BUS HOLDING CO» ՍՊԸ-ի կողմից 16.03.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/19 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**